



Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում Ավետիք Իսահակյանի, Հրանտ Մաթևոսյանի, Վարդգես Պետրոսյանի, Վահագն Դավթյանի, Դրաստամատ Միմոնյանի, Էդուարդ Թովֆյանի, Ռազմիկ Դավոյանի, Նաիրի Ջարյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Լևոն Անանյանի, Էդվարդ Միլիտոնյանի գրքերն են ցուցադրված: Իսկ ինչո՞ւ հենց նրանց

գրքերը: Ի՞նչն է միավորում այս գրողներին:

Ազգային գրադարանը, Հայաստանի Գրողների Միությունը ՀԳՄ-ի հետ համատեղ, միության 85-ամյակը նշանավորող ցուցադրություն է կազմակերպել՝ ներկայացնելով միության բոլոր 11 նախագահների գրքերի ընտրանին: «Մենք որոշեցինք բացառիկ ցուցահանդես անել, որը, վստահ եմ, աննախադեպ է: Ցուցադրությունը շատերի համար գուցե բացահայտում լինի,



քանի որ հիմնականում մեզ հայտնի են Գրողների միության վերջին տարիների նախագահների անունները, և ահա այս ցուցադրությամբ մենք հիշեցնում ենք, թե Գրողների միության 85-ամյա գործունեության ընթացքում ովքեր են դեկավարել միությունը: Նաև հետաքրքիր է, թե այս տաղանդավոր մարդիկ ինչ ստեղծագործություններ են գրել իրենց դեկավարման տարիներին, արդյոք այս բարդ

կառույցը դեկավարելուն զուգահեռ կարողացել են ստեղծագործել», - ցուցադրության բացման ժամանակ նշեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա Մարիբեկյանը՝ ընդգծելով, որ ցուցադրությունը կարևոր է նաև նրանով, որ ներկայացված են այս գրողների քիչ հայտնի գործերը:



Միջոցառմանը ներկա էին ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, քարտուղար Պետրոս Դեմիրճյանը, ՀԳՄ անդամներ Գագիկ Դավթյանը, Գագիկ Կարապետյանը և այլք: Էդվարդ Միլիտոնյանը ևս կարևորեց ցուցադրությունը, նշելով, որ այն թույլ է տալիս վերհիշել, թե ինչ բարդ ժամանակաշրջաններում են դեկավարել

Գրողների միության նախագահները և ինչ կարևոր դեր են կատարել տվյալ



ժամանակաշրջանի գրականության և դրա հետագա զարգացման համար: Դրաստամատ Միմոնյանի, Ավետիք Իսահակյանի, Վարդգես Պետրոսյանի օրինակով նա ներկայացրեց ՀԳՄ անցած ուղին ու նրա դեկավարների առջև ծառայած խնդիրներն ու բարդությունները: «Գրողների միությունը ահելի ու ջահելի, հայտնիների ու անհայտների միություն չէ, գրականության միություն է»,- շեշտեց էդվարդ Միլիտոնյանը:

Նա անդրադարձավ անկախության տարիների գրականությանը՝ ընդգծելով. «Մեր այս վերջին երեսուն տարվա՝ անկախության տարիների գրականությունը ես դիտարկում եմ ամենահետաքրքիրներից մեկն ու ամենավառը, երբ գրականությունը և ճշմարտությունը իսկապես հասան իրար: Հեղափոխությունն արվել է նաև գրականության մեջ, և դա Գրողների միության անդամների շնորհիվ էլ է: Շնորհավորում եմ բոլորիս այս հոբելյանի առթիվ, որովհետև Գրողների միությունը, գրականությունը բոլորիս համար է, ընթերցողների համար է: Շնորհակալ եմ Ազգային գրադարանին այս ցուցադրության համար: Մեր գրականության ընթերցողն էլ եք դուք, տարածողն էլ եք դուք»:







**Արամյան Միսնիյան**
1934 – 1937
Հայ կուսակցական և պետական գործիչ, քաղաքացի, նրբագրական գրականագետ: Հայաստանի Գրողների միության առաջին նախագահը: ՆԽՄԿ անդամ 1913 թվականից:



